ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-296-25.09.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1496- Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-296-25.09.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը՝ որպես դատավարական հարկադրանքի միջոց, անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում կկիրառվի ոչ միայն հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի և մեղադրյալի, այլ նաև աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող յուրաքանչյուր անձի նկատմամբ:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծով բարձրացված խնդրի լուծման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից դեռևս 2018 թվականի հունիսին մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված նախագիծը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից դրվել է շրջանառության մեջ, ինչից հետո ամփոփվել և ուղարկվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ: Սույն թվականի հունիսի 19-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում ստացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականը ՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի ուժով հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի

պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու դեպքում տվյալ հանրային ծառայողի աշխատավարձի վճարմանն առնչվող կարգավորումները և ներկայացնել դիրքորոշում՝ գործող կարգավորումներում առկա տարբերակված լուծումների իրավաչափ լինելու կամ այդպիսիք վերանայելու և միասնական մոտեցում որդեգրելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվում է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու դեպքերում վերջինիս աշխատավարձի վճարման կարգավորումներին վերաբերող միջազգային փորձը, որի արդյունքում նախատեսվում է փոփոխություն կատարել նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակված կարգավորումները, մասնավորապես, հանգում են հետևյալին՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում սահմանվել է առանձին հոդված, որն ուղղված է աշխատողի լիազորությունների կասեցման կարգավորմանը: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված դեպքերում դատախազը կամ, վերջինիս համաձայնությամբ, քննիչը որոշում են կայացնում աշխատողի լիազորությունների կասեցման վերաբերյալ: Այս ընթացքում, մինչև համապատասխան որոշման վերացումը, աշխատողի համար պահպանվելու են աշխատավարձն ու աշխատատեղը:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածում սահմանվել է ոչ միայն հանրային ծառայողության մեջ գտնվող, այլև բոլոր կասկածյալների և մեղադրյալների լիազորությունների կասեցման հնարավորություն: Այս

նպատակով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասից հանվել են «հանրային ծառայության մեջ գտնվող» բառերը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից, դրանով նախատեսված կարգավորումները համադրելով շրջանառության մեջ դրված նախագծերի կարգավորումների հետ, արդյունքում ներկայացնելով միասնական նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2019 թվականի N 1496 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-296-25.09.2019-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 17
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փաշինյան,

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գևորգ Պետրոսյանի, Արման Աբովյանի, Իվետա Տոնոյանի, Շաքե Իսայանի, Էդուարդ Բաբայանի և Դավիթ Մանուկյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-296-25.09.2019-ՊԻ-011/0):

/ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

.

25 սեպտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գևորգ Պետրոսյանի, Արման Աբովյանի, Իվետա Տոնոյանի, Շաքե Իսայանի, Էդուարդ Բաբայանի և Դավիթ Մանուկյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

24 **սեպտեմբեր 2019թ.**

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում» լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Գևորգ Պետրոսյան)

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը

Խնդրում ենք ներկայացված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ
ԻՎԵՏԱ ՏՈՆՈՅԱՆ
ՇԱՔԵ ԻՍԱՅԱՆ
ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության կամ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը (աշխատանքային պարտականությունների կատարումը), եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ աշխատանքում (պաշտոնում) մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:»

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:» Սույն հոդվածի ձևակերպումից հետևում է, որ տվյալ դատավարական հարկադրանքի միջոցը կիրառվում է միայն **հանրային ծառայության մեջ գտնվող** պաշտոնատար անձ հանդիսացող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ այն էլ միայն դրա համար անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում, ինչպես օրինակ՝ երբ կասկածյալը կամ մեղադրյալը փորձել են ոչնչացնել գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթերը, փորձել են ազդել վկաների, տուժողների, կամ դատավարության այլ մասնակիցների ցուցմունքների վրա և այլն:

Ինչպես արդեն նշվեց սույն հոդվածը տարածվում է միայն **հանրային ծառայության մեջ գտնվող** պաշտոնատար անձ հանդիսացող կասկածյալի կամ մեղադրյալի վրա: Այս տիրույթից դուրս է մնում մասնավոր ընկերություններում աշխատողները, ովքեր անհրաժեշտ հիմքերի առկայությամբ՝ ստանալով մեղադրյալի կամ կասկածյալի կարգավիճակ իրենց աշխատանքային պարտականություններն իրականացնելիս կարող են խոչընդոտել հանցագործության հետքերի վերացմանը, փորձեն այլ կերպ ազդել դատավարության մասնակիցների վրա:

Հաշվի առնելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը՝ այն է՝ «նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից»՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածը չի կարող տարածվել այլ անձանց վրա բացի հանրային ծառայություն զբաղեցնող անձանցից:

Որոշ իրավիճակներում ոչ միայն հանրային ծառայողները, այլև աշխատողները առհասարակ, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ստանալուց հետո իրենց աշխատանքային գործունեությամբ պայմանավորված շարունակում են օգտվել այնպիսի տվյալներից կամ փաստաթղթերից, որոնց վրա որոշակի փոփոխությունը, դրանց ոչնչացումը կեղծումը կամ դրանց կորոսուտը ինքնին կարող են խոչընդոտել քրեական գործի նախաքննությանը, վերացնել ապացույցները. ինչի արդյունքում էլ գործատուները շատ հաճախ զրկվում են իրենց և իրենց ընկերության շահերը պաշտպանելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջանում պաշտպանել ոչ միայն պետական այլ նաև մասնավոր կառույցների շահերը հնարավոր դեպքերից: Ուստի առաջարկում ենք հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի և մեղադրյալի կողքին ավելացնել նաև աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող յուրաքանչյուր անձի:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 152. Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը

1. Դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության կամ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը (աշխատանքային պարտականությունների կատարումը), եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ~~պաշտոնում~~ աշխատանքում (պաշտոնում) մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:

2. Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումն ուղարկվում է նրա աշխատավայրի վարչակազմի ղեկավարին, որն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է կատարել այն և դրա մասին տեղյակ պահել համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին:

3. Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը վերացվում է դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:

(152-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն)